**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

2026 թվականի փետրվարի 18-ին թվականին կնքված N **ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42** ծածկագրով պայմանագրի

ք. Երևան «30» 04 2026թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Հովհաննիսյանի, ով գործում է ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Մեգամարթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Խաչատրյանի, ով գործում է «Մեգամարթ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 18-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/42 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը» սյունակով նշված «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները» բառերը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի մայիսի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները»:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011047413
ՀՎՀՀ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝
------------------------------ Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Մեգամարթ ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 183 բն 33
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11811032524800
ՀՎՀՀ 01351516

Տնօրեն՝
------------------------------ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.